Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀԳեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Անգլերեն (8 դասաժամ) և Երաժշտություն (7 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի:

Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

— դիմում (ձև 1),

— 1 լուսանկար 3×4 չափի,

— բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

— անձը հաստատող փաստաթուղթ,

— «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայությանդեպքում),

— ինքնակենսագրություն (ձև 5),

— այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

— ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ

— հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

— որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. նոյեմբերի 06–ից մինչև նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. Նոյեմբերի 25 -ին՝ ժամը 10:00-ին:

ՀՀ Գեղարքունիքի մարզի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, Հասցե՝ գ. Աստղաձոր, 43-րդ փողոց, շենք՝ 6 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093668410 հեռախոսահամարով: